

# Ա Է Ե Տ Ա Բ Ե ր



“ԹՈՂ ՏՈՒՔ ՄԱՆԲ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԹ.


ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՓԵՏՐՈՒԱՐ 1, 1900

ԹԻՒ 2

### ՈՐԲԵՆԱՐԻՆ ԼՈՒՄԱՆ

Մեր Տէրը գովեց աղքատ որբեարին ոչ թէ քիչ ստակ տալուն համար, այլ անոր համար որ շատ տուաւ, բոլոր հարուստներուն տուածէն աւելի: Նուէրներ չափելու երկու կերպ կայ: Մէկն է ստակն արժէքը հաշիւի առնել: Ստորագրութեան թուղթ մը կը շրջաբերի եկեղեցի շինելու, որբեր խնամելու կամ անօթիներ կերակրելու համար: Թուղթին վրայ կը նայինք և կը տեսնենք որ մարդ մը տուած է հարիւր ոսկի, ուրիշ մը եօթմանս սունըհինգ ոսկի, ուրիշ մը յիսուն ոսկի, մինչ բոլոր միւսները տուած են քանի մը մէծիտիէ կամ թերեւս քսնի մը դահեկան: Կ'ըսենք թէ այդ երեք մարդիկը շատ տուողներն են, և նկատումով մը ճշմարիտ է: Աղէկ է որ կը գտնուին հարուստներ որ կարող և յօժար են ոսկիներ առնել մինչ օրերը: Ներ դահեկաններ միայն կու տան: Չենք կրնար ստակի գումարին վրայ չխորհիլ, վասն զի ստակը ս'ըջափ աւելի արուի, այնչափ աւելի ատաղձ կը գնուի եկեղեցիին համար, կամ աւելի հաց՝ անօթիներուն համար:

Բայց Գրիստոսի չափը տարբեր է: Գրիստոս կը նայի անձնուրացութեան գումարին վրայ: Թերեւս հարիւր ոսկի տուողը իրեն նուէրը գրեթէ չգգար այնչափ որչափ կը զգայ տասը դահեկան տուող աղքատ որբեարի մը: Անիկա պիտի չզրկուէր իր մխիթարու-



թենէն կամ հաճոյքէն իր նուէրին համար, մինչ աղքատ որբեարին պիտի տար իր հացէն կամ ամուսնէն մաս մը որոնց պէտք ունէր իր հանգիստին համար:

Ո՞րն է ուղիղ չափը: Միթէ Գրիստոսի չափը չէ: Որբեարին ուրբարութեամբ պիտի տար հարիւր ոսկի, եթէ ունենար, և հարուստներէն ոչ մէկը աւելի մեծ համակրանք կը զգայ անօթիներուն հանդէպ կամ աւելի զօրաւոր փափաք՝ անոնց բարիք ընելու: Եւ միտք բերենք թէ Գրիստոս ի՞ր չափովը պիտի դատէ աշխարհը: Ինք մեր ոսկիին պէտք չունի, բայց կ'ուզէ

մեր սէրը, անձնանուիրութիւնը, ծառայութիւնը և նուէրները որ ատոնց արգիւնքն են: Թող այս բանը մխիթարէ մեզմէ անոնք որ քիչ ունին: Կրնանք հարուստ ըլլալ սիրով, հաւատքով և բարի գործերով, և այս բաներուն համար է որ Տէրը պիտի ըսէ, “Ապրիս, բարի ու հաւատարիմ՝ ծառայ.”

### ԱՍՏՈՒԾՈՅ

ՄԻԹԱՐՈՒԹԻՒՆԸ  
 “Ինչպէս որ մէկ մայր մը իր տղան կը մխիթարէ, այնպէս ալ ես ձեզ պիտի մխիթարեմ:” Ես. ԿԶ. 13.


Ո՞վ կը հաւատայ թէ միայն չափահասները պէտք ունին մխիթարուելու: Տարակոյս չունիմ թէ այսպէս կը հաւատայ այն պիտի մէկը որ մուցած է թէ ի՞նչ զգացումներ կ'ունենար երբ տղայ մըն էր, կամ որուն մտքէն ելած են նեղութիւնները որոնք կրած էր երբ փոքրիկ աղջիկ մըն էր: “Ո՛հ, տղաք,” կ'ըսէ մէկը տխրութեամբ, “գուրք հիմա ձեր ամենէն երջանիկ օրերը կը վայելէք, բայց չէք գիտեր:” Այո, քանի մը նկատումներով ճշմարիտ է այս: Եւ սակայն ո՞վ չի չի ըրած մանկական վիշտերը որ չափազանց կը ճնշէին իր փոքրիկ սրտին վրայ, և ո՞վ չի չի ըրած մխիթարուելու և կարեկցութիւն գտնելու տենչը, այնքան սաստիկ որ բառերով չէր կրնար արտայայտուիլ բայց միայն հեկեկանքով՝ մօր կուրծքին վրայ: Սիրելի մայրը կը հասկնար միշտ մեր ցաւը, և մենք

երբ անոր կը դիմէինք միտարու-  
թեան համար, երբեք ետ չէինք դառ-  
նար առանց միտարուած ըլլալու:


Բայց ամէն ատեն մայր չգտնուիր, և  
ուրիշ ոչ ոք կրնայ պիտի ել տղեկը, կամ  
հասկնալ փոքրիկ սրտին տառապան-  
քը: Եւ սակայն կայ Մէկը որ կը յիշէ  
այդ մանուկները որ միտարութեան  
պէտք ունին, Մէկը՝ որ մօր սիրտը այն-  
քան փափուկ և խանդակաթ ըրաւ, և  
միտարութեան ամենաքաղցր խոտ-  
մունքն է սա խօսքը, «Ինչպէս որ մէկ  
մայր մը իր տղան կը միտարէ, այն-  
պէս ալ ես ձեզ պիտի միտարեմ:»

Բոլոր սէրը զոր մայրը ունի իր մա-  
նուկին հանդէպ՝ ասոր մէջ կը պարու-  
նակի: Ճիշդ ինչպէս որ ան միշտ պատ-  
րաստ է իր գործը մէկդի դնել, որ-

չափ կարևոր ալ  
ըլլայ այն, մտիկ ը-  
նելու համար ման-  
կական տառա-  
պանքը, պիտի ե-  
լու համար ցաւած  
սիրտը կամ կա-  
պելու համար վէր-  
քը, այնպէս ալ  
Աստուած միշտ  
պատրաստ է մտիկ  
ընել իրեն փոք-  
րիկ զաւակներուն:  
Երբեք մտիկ ընե-  
լու արգելք չէ իր  
գործը. երբեք  
չմոռնար և գիտ-  
թէ ճիշդ ի՞նչ կ'ը-  
սէ փոքրիկ մանու-



ներուն ցուցած սիրոյն: Եւ թէպէտ  
մայրը միշտ ձեր քով չկրնար ըլլալ,  
այս Միտարիչը միշտ ձեր քով պի-  
տի կենայ և պիտի խօսի ձեզի հետ  
բոլոր օրը: Եթէ անոր զաւակն էք,  
չկրնար ըլլալ այնպիսի մեծ փորձու-  
թիւն մը զոր կրելու կարողութիւն  
չտայ ձեզի, ոչ ալ այնպիսի ծանր  
վիշտ մը զոր ինք չկրէ ձեզի համար:  
Ուրեմն անոր տուէք ձեր անձերը եթէ  
արդէն տուած չէք, որպէս զի անոր  
օգնութիւնը վայելէք կեանքին բոլոր  
ուրախութիւններուն և ցաւերուն մէջ:



ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ

Պուէնոս Այրէս, Արճէնթին Հանրա-  
պետութեան մայրաքաղաքը, որ 585,  
000 բնակիչ ունի, Հարաւային Ամե-

թիւններուն անէծքն եղած են, տա-  
նիքները կը լեցուէին զինուած մար-  
դերով: Տուններուն բոլոր պատուհան-  
ները պատշգամ (չահնիշին) ունին, և  
տիկիներու համար սիրելի տեղեր են  
ուր կը նստին ցերեկները: Բնակիչնե-  
րը հետաքրքրաշարժ սովորութիւն մը  
ունին, այն է՝ ուրիշ տուն փոխադրուիլ  
երբ ընտանեաց մէջ մահ կը պատա-  
հի, որպէս զի ցաւալի յիշատակներէ  
ազատ ըլլան: Եթէ Պուէնոս Այրէսի  
տուններէն մէկն այցելէինք, հաւանօ-  
րէն մեզի պիտի հրամցուէր ըմպելի  
մը որ կը կոչուի Մաթէ, և կը պատ-  
րաստուի Երբայ կոչուած ծառին տե-  
րւներէն: Այս ծառը յատուկ այդ-  
նպատակով կը մշակուի: Յիշեալ ըմ-  
պելին թէյին տեղը կը բռնէ, և այդ

ընդհանրացած  
ըմպելին վրայ սա  
գերազանցութիւ-  
նը ունի որ ջիշե-  
րու անվնաս է:  
Գիշ կը լսենք Ար-  
ճէնթին Հանրա-  
պետութեան վը-  
րայ, բայց Գաղղիոյ  
և Գերմանիոյ ըն-  
դարձակութիւնն  
ունեցող երկիր է,  
և անոր մեծ մա-  
սին կլիման շատ  
աղէկ է: Թերևս  
ասոր և Հարաւա-  
յին Ամերիկէի նը-  
ման տեղեր ասկէ  
Հարիւր տարի ետ-

կը իրեն, իր դժուարութիւններուն և  
վիշտերուն վրայով: Եւ ճիշդ ինչպէս  
որ դուք միշտ գտած էք մօր բա-  
զուկներուն մէջ միտարութիւն ամէն  
վշտալի բանի մէջ որ կրնայ պատա-  
հիլ, այսպէս ալ Աստուած կը միտար-  
րէ ձեզ:

Ուրեմն անոր եկէք: Պատմեցէք ա-  
նոր ձեր յանցանքները, սխալները և  
մեղքերը: Ան արդէն զիտէ զանոնք,  
բայց կը սիրէ ձեր խօսիլը իրեն հետ:  
Պիտի ցուցնէ ձեզի թէ ի՞նչպէս նոր  
սկզբնաւորութիւն մը ընելու է, պիտի  
ըսէ ձեզի թէ ե՞րբ պէտք է որ տար-  
բեր ճախարայ մը երթաք, և պիտի օգնէ  
ձեզի որ ետ դառնաք այն սխալներէն  
զորոնք գործած էք: Պիտի մեղմ-  
վիշտը և բարկութիւնը որ ձեր սիրտը  
կը ցաւցնեն, և զանիկա հանդարտ  
և հեզ պիտի ընէ: Խայթոյր պիտի  
հանէ դառն խօսքէն, անաղիւս գոր-  
ծէն, և անոր տեղը պիտի դնէ սէր՝  
նման Յիսուս Գրիստոսի իր թշնամի-

րիկայի ամենէն մեծ քաղաքն է: Ա-  
ռաջին անգամ շինուեցաւ Սպանիացի  
Մէնտոնա զորավարէն 1535 ին, բայց  
այնքան անհանգիստ եղաւ Հնդկինե-  
րուն յաճախ ըրած արշաւանքներէն,  
որ բնակիչները զանիկա թողուցին և  
եղան անկէ քանի մը տարի ետքը և  
քաղաքը այրուեցաւ: Նորէն շինուե-  
ցաւ 1580 ին, և մայրաքաղաք եղաւ  
Սպանիական գաղթականութեան մին-  
չև 1810, երբ սկսաւ Սպանիոյ դէմ  
պատերազմը և տեւեց վեց տարի:  
Հանրապետութիւն հաստատուեցաւ  
1816 ին, և Պուէնոս Այրէս մայրաքա-  
ղաք մնաց: Հրապարակին վրայ երև-  
ցած տունները երկու յարկ ունին, բայց  
քաղաքին տուններէն շատը միայրակ  
են: Բոլոր տուններուն տանիքները տա-  
փակ են, և բնակիչները սովորութիւն  
ունին իրիկունները թափուներով նստիլ  
տանիքին վրայ: Յաճախ պատահած  
պատամբութիւններու միջոցին, որ Հա-  
րաւային Ամերիկայի Հանրապետու-

քը մեր երևակայածէն աւելի կարևոր  
դերեր պիտի կատարեն աշխարհիս  
մէջ:




ՏՂՈՅ ՀԱՄԱՐ ԴԱՍ ՄԸ

Խօսակցութիւն մը եղաւ Գարլի և  
իր մօր մէջտեղ: Մայրը անոր գործ  
մը հրամայեց, որ Գարլի խաղերուն  
արգելք պիտի ըլլար, և թէպէտ Գարլ  
հնազանդեցաւ, բայց բաւական տըր-  
տունջներ ընելով: Շատ բան ունէր  
ըսելու իր ուղած բաներն ընելու թոյլ  
չտրուելուն դէմ: Կը մտածէր թէ տա-  
կալին երկար ժամանակ կար մինչև  
որ մեծնար և այն ատեն գործեր պի-  
տի ընէր: Մինչ տղան շատ վշտացած  
էր, քովը մօտեցայ բակին մէջ և ըսի,  
«Գարլ, ինչո՞ւ կը ջանաս քուռակդ  
(թայ) կրթել:» Տղան զարմանքով վեր  
նայեցաւ. «Ի՞նչու որ բանի մը օգ-  
տակար ըլլայ», պատասխանեց: «Բայց  
անիկա իրեն կերպերը կը սիրէ, և  
ինչո՞ւ համար այնպէս չընէ», ըսի:

Այն ատեն Գարլ աչքը տնկելով վրաս նայեցաւ ապշած : «Կ'ուզեմ գիտնալ թէ ի՞նչ բանի օգտակար է ձի մը որ իր կապին հետեւիլ կ'ուզէ միշտ» ըսաւ իբր թէ բարկանալով մը այդպիսի բաներէ չհասկնալուս համար : «Գարլով գործելու» շարունակեցի : «Կարծեմ ատոր տակաւին բաւական ժամանակ կայ մինչև որ մեծնայ» : «Ինչո՞ւ : քուռակ եղած ժամանակը եթէ չտորվի, ետքը ի՞նչ կ'ըլլայ» : ըսաւ Գարլ : Այն ատեն կեցաւ, կարմրեցաւ և վրաս նայեցաւ ամչնալով մը : Այդ օր ա՛լ գանգատ չլսեցի անկէ :

ԿԵԱՆՔ ԱԶԱՏՈՂ ՇՈՒՆ ՄԸ


Քանի մը տարիներ առաջ նաւ մը քլուեցաւ Անգղիոյ մէկ ծովեզերքը : Ծովը սաստիկ ալէկոծեալ էր : Ութ խեղճեր Օգնութիւն կ'ազազակէին, բայց նաւակ չէր կրնար մօտենալ, վասն զի փոթորիկ կար : Մարդիկը միշտ վտանգի մէջ կը գտնուէին, նաւը ամէն վայրկեան ենթակայ էր ընկղմելու : Վերջապէս մարդ մը եկաւ ծովեզերքը իր Նիւֆրնայէնտի շունով : Կենդանիին ուշադրութիւնն ուղղեց նաւին և անոր բերանը կարճ ցուպ մը դրաւ : Մտայի և արիասիրտ շունը իսկոյն հասկցաւ իր տիրոջ միտքը, ծով նետուեցաւ, և կատաղի ալիքներուն հետ մաքառելով լողաց և մօտեցաւ նաւին : Թէպէտ այնքան մօտ չկրցաւ երթալ որ իրեն յանձնարարուած գործը կատարէր, բայց նաւորդները հասկցան թէ շունը ինչո՞ւ զրկուած էր, և շունն մը կապելով փայտի ուրիշ կտորի մը՝ շան կողմը նետեցին : Շունը իսկոյն վար ձգեց իր բերնի փայտը և անմիջապէս խաժաւ իրեն նետուածը, յետոյ այնպիսի ուժով և հաստատամտութեամբ որ չէր սպասուեր, — վաւրն զի կրկին և կրկին աներեւոյթ եղաւ ալիքներուն տակը, — կահկներուն մէջէն քաշեց տարաւ և յանձնեց իր տիրոջ : Այսպէս, նաւին հետ հազորդակցելու թել մը հաստատուած ըլլալով, բոլոր նաւորդներն ազատուեցան :




ՁԿՆՈՐՍ ԹՈՉՈՒՆՆԵՐ

Ծովուն և օդին բնակիչները կը թռի թէ քիչ յարմարութիւն ունին իրարու հետ առնչութիւն ընելու, և սակայն շատ տեսակ թռչուններ կան, որ իրենց ուտեստը ծովէն կը ստանան : Ոմանք երկայն սրունքներ ունին

և ծանծաղ (ցած) ջուրերու մէջ կը պտորտին, և ուրիշներ մաշկապատ ոտքեր ունին բազերու պէս և ջուրին երեսը կը լողան : Կը թռի թէ անոնց հետ չեն կրնար մրցել ձուկերը, վասն զի ձուկերը չեն կրնար օդին մէջ թռչուններուն հասնիլ, մինչ թռչունները ջուրին մէջ սուզելով կրնան ձուկ բռնել և ուտել : Հոս կը տեսնուին



ձուկ ուտող թռչուններ : Առաջինն է կաննէթը որ իր սուր աչքերով կը տեսնէ ջուրին տակը գտնուող ձուկը, և գլխովար կը նետուի շատ բարձրութենէ և ջուրը չորս կողմ կը ցատկեցընէ երբ անոր կը դարնուի : Երբեմն թռչունը կը սպաննուի տախտակի մը ձուկ մը կապելով : Թռչունը ձուկին վրայ կը նետուի և կը մեռնի տախտակին զարնուելով :



Միւս թռչունն է Ֆրիկէյթը : Անոր բնավայրն է Այրեցած Գօտիին մէջ, իսկ կաննէթինը՝ Բարեխառն Գօտիին մէջ : Ֆրիկէյթը տգեղ քալուածք ունի ցամաքի վրայ, և թէպէտ մաշկոտն է, յաճախ ջուրին երեսը չիջներ : Շատ անգամ թռչական ձուկ կ'ուտէ որոնք ջուրէն դուրս կը թռչին թշնամիներէ խոյս տալու համար, բայց հաւասարապէս անողորմ թշնամիի մը ձեռք կ'իյնան օդին մէջ : Ֆրիկէյթները նաև


շատ անգամ կը հալածեն ճայեր և ուրիշ թռչուններ որոնք ձուկ բռնած են, և աւելի արագաթռիչ ըլլալով կը ստիպեն իրենցմէ աւելի մանր թռչունները վար ձգել իրենց որսը : Ֆրիկէյթը կը նետուի և կը յափշտակէ զայն տակաւին ջուրը չիմկած : Այսինքն՝ աւազակ է և ուրիշներու աշխատութեան պտուղները կ'ուտէ :

ԻՐ ՄԱՅՐԸ

Տասնութ տարեկան երիտասարդ մը խեղճ ծերուկ մը անգլիացար մեռցուցած ըլլալուն համար բանտ պառկած իր սպաննուելուն կը սպասէր : Դէմ կը դնէր ամէն անձի որ մարդասիրարար իրեն մօտենալ կ'ուզէր. նաև կը բարկանար և հայհոյութիւններ կը տեղար հոգևոր պաշտօնեային ալ որ բարեկամօրէն կ'ուզէր օգտակար ծառայութիւն մը մատուցանել անոր : Տղան բացարձակ սրիկայ մըն էր : Սպաննուելէն երկու օր առաջ հեռագիր մը բերուեցաւ բանտը : Առաւ զայն և պահարանը պատուեց բացաւ հայհոյութիւն մը ընելով : Բայց վայրկեան մը յետոյ փոփոխութիւն մը եկաւ անոր տխուր դէմքին վրայ : Վեր բարձրացուց ձեռքերը պոռալով և սկսաւ լալ և հեկեկալ : Հողևոր պաշտօնեան առաւ հեռագիրը և սա խօսքերը կարդաց : «Բու մայրդ տակաւին կը սիրէ քեզ» : Հեռագիրը երկու հազար մղոն հեռուէն եկած էր : Մայրը երեք

տարիէ ի վեր լած չէր իր թափառական որդւոյն վրայով : Դեռատի անառակը փոխած չէր իր անունը, և մայրը օր մը լրագրի մը մէջ համառօտ բան մը կարդացած էր անոր վրայ թէ իբրև մարդասպան մահուան դատապարտուած էր : Այլ ուշ էր, ժամանակ չկար զանիկա փրկելու : Որդւոյն խայտառակութեան և կործանման համար մոր մաքառ սրտովը ուրիշ բան կարող չեղաւ գրել, բայց միայն այդ խանդադատագին խօսքը :

Մայրական սէրը սուրբ է : Յաւալի և ցաւալիէ ալ աւելի բան մըն է որդւոյն այդ աստիճան նուաստութիւնը որ նախատինք կը բերէ մօրը : Բայց մայրական սէրը մինչև անգամ անով ալ չմարեր :



ՍԱՌՆԱՅԻՆ ԲԱՐԱՅՐՆԵՐ

Հունգարիոյ մէջ Տոպսինայի մօտերը կայ քարայր մը որ իբր տասնըհինգ տարի առաջ գտնուեցաւ : Գարայրին

բերնին հասնելէ շատ առաջ սառնաշունչ հով մը կը փչէ դէպի մեր կողմը, և երբ չորս կողմ կը նայինք, կը տեսնենք որ ժայռերն ու մերձակայ եղևինները սառի ճերմակ թանձր խաւով պատած են: Զգուշութեամբ կ'իջնենք փայտէ երկայն սանդուխէ մը, և ահա մեր աչքին առջև կը պարզուի գիւթական երկիր մը: սիւներ և կամարներ զարդարուած են չքնաղ տերևներով, ծաղիկներով և ամենանուրբ ասեղնազորով թեմամբ զոր սառին մագակակալ զօրութիւնը շինած է: Մինչ ուղեցոյցը իր ջահը ամէն կողմ կ'ուղղէ, պատերը կը շողողան բիրաւոր աղամանդներով, և անթիւ կարկաշասհանքներ որ միակուր սառի փոխուած են՝ կը փողփողին ծիրանի դօտիին բոլոր գոյներովը: Կը կարծուի թէ քարայրը լեռներուն մէջ կ'երկընայ, բայց տակաւին անոր փոքր մէկ մասը հետազօտուած է: Սառը իր մասնաւոր ձևակերպութեան պատճառաւ կ'աճի շարունակ: Քարայրը դէպի վար կ'իջնէ: Զմեռուան մէջ ցուրտը նեղ մուտքերու մէջ կը թափանցէ, և ոչ միայն արդէն հոն գտնուած սառը կը պնդացնէ, այլ աւելի սառ յառաջ կը բերէ: Ամառուան մէջ տաք օդը չկրնար հասնիլ այս սառած տեղերը, ուստի շերմութեան աստիճանը սառուցման կէտէն վար կը գտնուի միշտ: Քարայրին բերնին մօտ սառնային պարսպի մը վրայ կը տեսնենք երկու թիթեանիկներու սառած փափուկ մարմինները: և քանի մը ոսկորներ, արջերու մնացորդներ, ժայռերուն ճեղքուածներուն մէջէն հաւաքուած են: Ասոնք են այս քարայրին մէջ գտնուած կենդանի արարածներուն միակ մնացորդները:

Հունգարիոյ Չիլիէ գեղին մօտերը կրաքարի այլ մը կայ որ ամառը սառուով պատած է, և ձմեռը հանգստաւէտ տաքութիւն մը կ'ունենայ: Ամառուան մէջ ցուրտը այնքան սաստիկ է որ քարայրին առաստաղը կը ծածկուի կախուած ահագին սառերով, որոնք վերջին աստիճան գեղեցիկ ձևեր ունին: Ասոնք արդիւնք են գարնան մէջ ձիւնին հալելուն՝ ձեղունին մակերեսին վրայ որ արեգակէն կը տաքնայ: Վճիտ շուրը կը կաթկթէ ճեղքուածներէն և կը սառի կաթած միջոցին: Մերձակայ բնակիչները այս սառը իրենց ըմպելիները պաղեցնելու կը գործածեն: Սրժանահաւատ անձինք ըսած են թէ շաբաթ մը պէտք է որ բանին երկաթուղիի վեց հարիւր կառքեր քարայրին բոլոր սառերը

վերցնելու համար: Զմեռը ամբողջ քարայրը չոր և տաք կ'ըլլայ, սառը կը վերնայ և դանդաղ կենդանիներ, ճանճեր, չղիկներ և բուեր իրենց հանգստաւէտ բնակարանը կ'ընեն քարայրը մինչև գարուն:

Ռուսիոյ մէջ Խէյքէի կայսերական աղի գործարաններուն մօտ կը գըտնուի քարայր մը որ մասամբ լեցուած է սառով: Ամառ ատեն, գեղին փողցին հաւասար բարձրութեան վրայ, քարայրին դրան ներսի կողմը, մինչև երեք չորս ոտք տեղ, ուէ բան կը սառի կարճ միջոցի մէջ: Ամբողջ ձեղունը և բոլոր պատերը կը ծածկուին կախուած սառնակտորներով, և յատակը կը ծածկուի ձիւնով, սառով և սառած հողով: Զմեռ ատեն, երբ դուրսի կողմը կարծր և ցուրտ է, քարայրը այնպէս տաքուկ կ'ըլլայ որ գեղացիները կրնան հանգիստ քնանալ անոր խորութիւններուն մէջ մինչև անգամ առանց իրենց վրայ ոչ խարի մորթ առնելու:

ՅԵՂԱՊԵՏՆԵՐ ԵՒ ՄՈՂԸ

Լոնտոն հրատարակուած Թէո Պլէն հանդէսին մէջ պատմութիւն մը կայ մեզի մը վրայ որ հիմա մեռած է: Մեծ ճանապարհորդ մըն էր ան, և իր ծովային ուղևորութիւններուն մէջ անգամ մը ցամաք ելաւ հեռու որ կղզի մը, Նոր Զելանտա:

Առաջարկուեցաւ որ միտք կարդալու արուեստին մէկ ցոյցն ընէ Մարտիներուն ցեղապետին առջևը: Քիչ մը խօսակցելէ ետքը որոշուեցաւ որ ցեղապետն ինք պահէ մեզին գտնելիք բանը: Միտք կարդացողը դուրս ելաւ սենեակէն և քիչ մը ետքը նորէն ներս բերուեցաւ աչքերը կապուած, այսպիսի առիթներու մէջ սովորութեան համաձայն: Ժամանակէ մը ետքը մօզը ըսաւ թէ պահուած բանը ցեղապետին բերնին մէջ է: Յեղապետը գլուխը բիրտ կերպով շարժելով՝ Ոչ, ըսաւ: Մոզը պնդեց իր խօսքին վրայ, և ըսաւ որ ցեղապետին բերանը լայն բացուելու է: Յեղապետը մերժեց: Մոզը նորէն պնդեց, և մեծ զրգուում առաջ եկաւ մինչև որ վերջապէս սևուկ ցեղապետը դժկամակութիւնով բացաւ իր ծնօտները: Փնտուում բանը հոն չէր: Բայց յաջորդ վայրկեանին սաստիկ հազ մը եկաւ ցեղապետին վրայ: Յեղապետը կորուած բանը, կոճակ մը, կլէլ ջանացած էր բայց կրցած չէր, և ստիպուած էր հազով դուրս հանել: Մտորիները խնդալէն ճաթեցան: Զէին

գիտեր ինչի վրայ աւելի սքանչանալին, մեզին խնայողութեամբ, թէ ցեղապետին դիւցազնութեանը վրայ:

ՆՆՆԳԱՄԻՏ ԱԳՌԱԻ ՄԸ

Տիկին մը կը հարցնէ թէ ո՞վ կ'ըսէ որ ազգաւաները չեն խորհրդ: Ինք կը կարծէ թէ գոնէ քանի մը ազգաւաներ չափով մը ունին տրամաբանելու կարողութիւն, եթէ հետագայ պատմութիւնը ճշմարիտ է: Տիկնոջ բարեկամներէն մէկը ըսեր է թէ իրօք այդպիսի դէպք մը պատահած է անոնց տան մէջ:

Ազգաւ մը բռնուեցաւ տղոցմէն և տուն բերուելով ընտանեացու: Տղաք շատ կը սիրէին զանիկա, և հարկաւ շատ սիրով կը վարուէին անոր հետ: Ինչպէս շատ տուններու մէջ, ուր տղաք կը գտնուին, կար նաև ընտանի կատու մը: Բայց կատուն և ազգաւ բարեկամ չէին իրարու հետ:

Օր մը անսովոր կերպով ընտիր պատառ մը տրուեցաւ կատուին: Ազգաւը ոչ միայն նախանձու աչքով նայեցաւ անոր վրայ, այլ քանի մը անգամ փորձեց այ առնել պատառը: Բայց կատուն ամէն անգամ անգլխեց զանիկա, և ազգաւը պէտք էր որ վարպետութիւն մը բանեցնէր: Ազգաւը բաց դռնէն դուրս ելլելով աներևոյթ եղաւ: Քանի մը վայրկեանէն նորէն ներս եկաւ երկայն լարով մը որ հին կապերտէ մը հանուած էր: Լարը գետինը դուրս կատուին դիմացը քիչ մը հեռուն, և սկսաւ շարժել զայն քաշքշշելով ինչպէս տեսած էր թէ տղաքը կ'ընէին կատուն խաղցնելու համար: Կատուն անմիջապէս ցատկեց լարը բռնելու համար: Այս էր ճիշդինչ որ ազգաւը կ'ուզէր, և ինք ալ հաւասար ճարտարութեամբ ցատկեց ցանկալի պատառին վրայ և յափըշտակելով զայն թռաւ մէկզբի, թողելով կատուն որ խաղայ լարին հետ:

ԳԵՆԵՏԵՄԲԵՐԻ ՀԱՆՆԵՆՈՒԿԻՆ ՊԱՍԱՍԻԱՆԸ

L	Ա	Յ	Ք	Մ	Ղ
Ո	Ն	Խ	Մ	Ր	Ո
Յ		Դ	Մ	Ն	Գ
	Ս	Մ	Ա	Ա	
		Ի	Ր	Մ	
		Ն			
		Ա	Ե	Ր	
		Բ	"	Ր	Պ
	Մ		Ո	Ղ	"
Ա	Ր	Յ	Ի	Ի	Ա
Ճ		Ն	Ի	Ն	"

"Արդարներուն ճամբան ծագող լոյսին պէս է" Առակ. Դ. 18:

Տարեկան բաժանորդագրի կանխիկ, ամեն տեղոյ համար՝ 1000 Լ

Ամբիկոյի Միտինարաց Ը Արտօնատէր Ճ. Տնօրէն—Խմբագիր Հ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒ Ի ՏՊԱՐԱՆ Ա. ՅԱՎՈՒ Յինճանճըլար Եղգուշու: